

Կեցցե՛ք բարենորոգում...:

**

Մայրաքաղաքիս թուրք մամուլն Ալպանիացիներն կխրատե, որ Գարատաղին ընդդիմութիւն չընեն եւ իրենց ոյժն Յունաստանի դէմ պահեն:

Օր պիտի գայ, ուր տաճիկ լրագիրներն պիտի յորդորեն Ալպանիացիներն, որ Յունաստանին ընդդիմութիւն չընեն եւ իրենց բազուկներու զօրութիւնն կառավարութեան խօսքը մտիկ ընելու համար գործածեն:

Այս է թուրք մամլոյն սովորական ընթացքը. նախ գրգռել եւ ապա հանդարտեցնել...:

8 Օգոստոս

Հարստահարութիւններու վրայ խօսող հեռագիրներ ամեն օր կու գան պատրիարքարան կանոնաւոր կերպով – արդէն այդ հեռագիրներէն գատ ամեն օր կանոնաւոր կերպով պատրիարքարան եկող չկայ. պաշտօնեայնէրէն ոմանք կէսօրին կու գան եւ ոմանք բնաւ չեն գար: Այդ հեռագիրներէն մին այնչափ երկար էր, որ անոր փոխադրութեանը համար տասն ոսկի օսմանեան վճարուած էր հեռագրատան:

Հեռագրական տեսչութիւն շատ գոհ է այն հարստահարութիւններէն, որք տեղի կ'ունենան Հայաստանի մէջ, վասն զի անոնց շնորհիւ հեռագրական սնտուկին մէջ բաւական ոսկի կ'մտնէ:

Եւ կարճամիտ մարդերը կ'ուզեն, որ կառավարութիւնն իւր եկամուտները պակսեցունէ այն պահուն՝ ուր զանոնք աւելացնելու անհրաժեշտ պէտք կայ:

Թո՛ղ աւելցունէ, բայց ինչո՞ւ *պիւտճէի* մէջ չնշանակեր հարստահարութիւններէ գոյացած հասոյթը:

**

9 Օգոստոս

Մեր բարեխնամ կառավարութիւնն ամեն օր կ'աղաչէ վեց տէրութիւններն, որ Բերլինի դեսպանախորհրդոյ մէջ որոշուած հելլենական սահմանագիծը քիչ մը բարեփոխեն: